

1. Որն է Արեգակի ճառագայթման էներգիայի հիմնական աղբյուրը.՝ 1) ռադիոակտիվ տարրերի տրոհումը 2) քիմիական այրումը, 3) գրավիտացիոն սեղմումը 4) ջրածնի ջերմամիջուկային այրումը
2. Որքան է կազմում Արեգակի պսակի ջերմաստիճանը.՝ 1) 10⁶K 2) 10⁷K 3) 40000K 4) 6000K
3. Հին Հունաստանի աստղագետներից ով հայտնաբերեց պրեցեսիայի երևույթը.՝ 1) Հիպարքոսը 2) Արիստարք Սամոսացին 3) Պտղոմեոսը 4) Էրատոսթենեսը
4. Մոլորակներից որը երկրանման չէ.՝ 1) Մարս 2) Մերկուրի 3) Ուրան 4) Վեներա
5. Աղյուսակում Յուպիտերի արբանյակների պտտման պարբերությունները են՝ արտահայտված օրերով և ուղեծրերի մեծ կիսաառանցքները՝ կամայական միավորներով: Որ արբանյակի տվյալներում սխալ կա:
 - 1) Իո 2) Եվրոպա 3) Գանիմեդ 4) Կալիստո

Արբանյակ	Պարբերություն	Կիսաառանցք
Իո	1.77	0.42
Եվրոպա	3.55	0.67
Գանիմեդ	7.15	1.07
Կալիստո	16.69	2.28

6. Արհեստական արբանյակի ուղեծրի պերիգեյը գտնվում է Երկրի մակերևույթի վրա, իսկ ապոգեյը՝ Լուսնի ուղեծրի վրա: Որքան է կազմում արբանյակի պտտման պարբերությունը: 1) 9.9 օր 2) 27.3 օր 3) 13.8 օր 4) 4.9 օր
7. Որ պնդումը սխալ չէ: Լուսինը.՝ 1) միշտ ծագում է արևմուտքում և մայր մտնում արևելքում 2) ամեն օր ծագում է 50ր ավելի ուշ, քան նախորդ օրը, 3) ամեն օր ծագում է 50ր ավելի շուտ, քան նախորդ օրը 4) լրիվ է (լիալուսին) կեսգիշերին, երբ անցնում է միջօրեականով:
8. Ով է հայտնաբերել Վեներայի փուլերը.՝ 1)Հյուգենսը 2) Կասինին 3) Գալիլեյը 4) Հերշելը
9. Եթե Լուսնի սիդերիկ պարբերությունը լիներ 91 օր, մոտավորապես որքան կլիներ նրա սինոդիկ պարբերությունը.՝ 1) 121 օր 2) 182օր 3) 73 օր 4) 274 օր
10. Արեգակի և Լուսնի խավարումների կրկնման պարբերությունը (Մարոս) մոտավորապես հավասար է.՝ 1) 25800 տ 2) 18 տ 3) 73 տ 4) 274 տ
11. Աստերոիդի շառավիղ-վեկտորը 150 օրվա ընթացքում գծում է իր ուղեծրով պարփակված մակերեսի 0.158 մասը: Որքան է նրա պտտման պարբերությունը.՝ 1) 21.6 տ 2) 2.6 տ 3) 7.4 տ 4) 4.3տ

12. Որ համաստեղությանն է պատկանում Ռիգել աստղը.՝ 1) Ցուլ 2) Օրիոն 3) Պեգաս 4) Կասիոպեա
13. Մարսի մթնոլորտում առավել տարածված մոլեկուլն է՝ 1) CO₂ 2) O₂ 3) N₂ 4) H₂O
14. Հետևյալ աստղային համակարգերից որն է հայտնաբերել Վ.Համբարձումյանը.՝ 1) Բաց աստղակույտերը 2) Գնդաձև աստղակույտերը 3) Գալակտիկաները 4) Աստղասփյուռները
15. Որ սպեկտրալ դասի աստղեր չկան.՝ 1)G 2) F 3) H 4) K
16. Մայր չմտնող աստղի բարձրությունը 20° է ներքին կուլմինացիայում, 50°՝ վերին կուլմինացիայում, որը տեղի ունենում զենիթից հարավ: Որոշել տեղանքի աշխարհագրական լայնությունը:
17. 5900A գծի ալիքային երկարությունները Արեգակի հասարակածային գոտու հակադիր եզրերում դիտելիս տարբերվում են միմյանցից 0.08 Å- ով: Արեգակի շառավիղը ընդունել $R = 6.96 \cdot 10^8$ մ: Քանի օր է կազմում Արեգակի պտտման պարբերությունը իր առանցքի շուրջը: Պատասխանը տալ բնական թվի տեսքով:
18. 100 պարսեկ հեռավորության վրա գտնվող աստղի տեսանելի աստղային մեծությունը 5^m է: Քանի նման աստղի գումարային բացարձակ աստղային մեծությունը հավասար կլինի -6^m :
19. Երկու աստղերի լուսատվությունների միջինին համապատասխանող աստղային մեծության և աստղային մեծությունների միջինի տարբերությունը հավասար է $2.5 \log \frac{3}{5}$: Քանի անգամ է մի աստղը պայծառ մյուսից:
20. Վերջերս մի խումբ աստղագետներ հայտարարեցին, որ հայտնաբերել են մի նոր մոլորակ, որի հեռավորությունը Արեգակից գնահատվել է 600-1200 ա.մ.: Ընդունելով, որ Տիցիուս-Բոդեի օրենքը ճիշտ է, որոշեք, թե Արեգակնային համակարգի որերորդ մոլորակը պետք է լինի այս նոր հայտնաբերված մոլորակը: